ԵԴ/0382/01/20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Երևան քաղաքի առաջին ատյանի
ընդհանուր իրավասության դատարան,
նախագահող դատավոր Վ.Գրիգորյան

ՀՀ վերաքննիչ քրեական դատարան,
նախագահող դատավոր՝ Ա.Նիկողոսյան
դատավորներ՝ Վ.Ռշտունի
Ա.Վարդանյան

25 հոկտեմբերի 2024 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ՝ Գ.ՔՈԼՈԶՅԱՆԻ
մասնակցությամբ տուժող՝ Դ.ՓՈԼԱԴՅԱՆԻ
տուժողի ներկայացուցիչ՝ Կ.ՄԵԺԼՈՒՄՅԱՆԻ
ամբաստանյալի իրավահաջորդ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆԻ

դռնբաց դատական նիստում քննության առնելով տուժող Դավիթ Փոլադյանի ներկայացուցիչ Կ.Մեժլումյանի բացառիկ վերանայման բողոքը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. Դավիթ Փոլադյանի հաղորդման հիման վրա 2018 թվականի օգոստոսի 13-ին, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 17861818 քրեական գործը, որի շրջանակներում Անդրանիկ Սերյոժայի Այվազյանին մեղադրանք է առաջադրվել նույն օրենսգրքի 338-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: Դավիթ Փոլադյանը քրեական գործով ճանաչվել է տուժող:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2022 թվականի հունիսի 16-ի որոշմամբ Անդրանիկ Սերյոժայի Այվազյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով քրեական հետապնդումը դադարեցվել է և քրեական գործի վարույթը կարճվել՝ ամբաստանյալի մահվան հիմքով:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2022 թվականի սեպտեմբերի 26-ի որոշմամբ դատախազ Ա.Բեգլարյանի և տուժող Դ.Փոլադյանի ներկայացուցիչ Կ.Մեժլումյանի բողոքները մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի որոշումը թողնելով անփոփոխ:

4. Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի մարտի 7-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 26-ի որոշման դեմ տուժողի ներկայացուցիչ Կ.Մեժլումյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

5. Տուժող Դ.Փոլադյանը 2023 թվականի օգոստոսի 2-ին դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ վիճարկելով կիրառման ենթակա դրույթի՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

6. ՀՀ Սահմանադրական դատարանը, 2024 թվականի հունվարի 23-ի թիվ ՍԴՈ-1712 որոշմամբ, քննության առնելով Դավիթ Փոլադյանի դիմումը, 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով ամրագրված իրավակարգավորումը ճանաչել է ՀՀ

Սահմանադրությանը համապատասխանող՝ այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ «նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար» ձևակերպումը վերաբերում է նաև քաղաքացիական դատավարության կարգով նոր երևան եկած հանգամանքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայմանը: Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանը փաստել է, որ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը դիմողի նկատմամբ կիրառվել է Սահմանադրական դատարանի որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

7. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2024 թվականի հունվարի 23-ի թիվ ՍԴՈ-1712 որոշումը վկայակոչելով որպես նոր հանգամանք, տուժող Դ.Փոլադյանի ներկայացուցիչ Կ.Մեժլումյանը բացառիկ վերանայման բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան:

8. Վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 17-ի որոշմամբ, տուժող Դ.Փոլադյանի ներկայացուցիչ Կ.Մեժլումյանի բացառիկ վերանայման բողոքի հիման վրա հարուցվել է նոր հանգամանքի հիմքով Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի մարտի 7-ի որոշման բացառիկ վերանայման վարույթ և սահմանվել է դատական վարույթի իրականացման բանավոր ընթացակարգ:

<u>Բացառիկ վերանայման բողոքի հիմքը, փաստարկները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

9. Տուժող Դ.Փոլադյանի ներկայացուցիչ Կ.Մեժլումյանի պնդմամբ՝ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2024 թվականի հունվարի 23-ի թիվ ՍԴՈ-1712 որոշումը նոր հանգամանք է Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի մարտի 7-ի որոշումը վերանայելու համար:

Բողոքաբերը նշել է, որ Սահմանադրական դատարանը հաստատված է համարել, որ սույն գործով ստորադաս դատարանների կողմից ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետին տրված մեկնաբանությունը հակասում է ՀՀ Սահմանադրության դրույթներին:

10. Վերոշարադրյալի հիման վրա, Դ.Փոլադյանի ներկայացուցիչ Կ.Մեժլումյանը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 26-ի որոշումը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

<u>Բացառիկ վերանայման բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

11. Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հունիսի 16-ի որոշման համաձայն՝ *«Թիվ 17861616 քրեական գործը՝ հաստատված մեղադրական եզրակացությամբ, 04.05.2020թ. մուտքագրվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան:*

15.06.2022թ. կայացած դատական նիստի ընթացքում պաշտպան Հ.Ճարոյանը միջնորդություն ներկայացրեց՝ ամբաստանյալի մահվան հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին:

(…)

Դատարանը, ուսումնասիրելով գործում առկա նյութերը, արձանագրում է, որ սույն գործով առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով սահմանված՝ Անդրանիկ Այվազյանի նկատմամբ քրեական հետապնդումը և քրեական գործի վարույթը բացառող հանգամանքը, ինչը հավաստվում է ՀՀ ՔԿԱԳ ԱԲ251803 մահվան մասին վկայականի պատճենով, ինչպես նաև սույն քրեական գործով բացակայում է վերջինիս իրավունքների վերականգման նպատակով գործի վարույթը շարունակելու անհրաժեշտությունը: Ինչ վերաբերվում է տուժողի իրավունքների վերականգնման նպատակով քրեական գործի վարույթը շարունակելու անհրաժեշտությանը, Դատարանը գտնում է հետևյալը.

(…) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով նախատեսված երկու բացառություններից երկրորդի տառացի մեկնաբանությունից երևում է, որ վարույթի շարունակությունը պետք է անհրաժեշտ լինի որևէ անձի նկատմամբ քննված գործին, սակայն

քաղաքացիադատավարական կամ վարչադատավարական ընթացակարգերով իրականացվող վարույթները որևէ անձի նկատմամբ իրականացվող վարույթներ չեն: (...) Հետևաբար Դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով նախատեսված՝ «երբ գործի վարույթն անհրաժեշտ է (...) ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար» արտահայտությունը վերաբերվում է քրեադատավարական ընթացակարգով քննված գործերին»[1]:

12. Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 26-ի որոշման համաձայն՝ *«(...) [Գ]նահատման ենթարկելով ամբաստանյալ Անդրանիկ Սերյոժայի Այվազյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունները, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ դրանք լիարժեք հիմնավորված են և բխում են ներկայացված նյութերի համակցությունից:*

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ ինչպես իրավացիորեն արձանագրել է Առաջին ատյանի դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով սահմանված «կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար» ձևակերպման տառացի մեկնաբանությունից բխում է, որ դրա կիրառման համար վարույթի շարունակությունը պետք է անհրաժեշտ լինի որևէ անձի նկատմամբ քննված գործի վերսկսման համար, այնինչ քաղաքացիադատավարական կամ վարչադատավարական ընթացակարգերով իրականացվող վարույթները որևէ անձի նկատմամբ իրականացվող վարույթներ չեն»[2]:

13. ՀՀ Սահմանադրական դատարանը՝ 2024 թվականի հունվարի 23-ի թիվ ՍԴՈ-1712 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(...) Դատարանները, դիմողի գործով մեկնաբանելով վիճարկվող դրույթի՝ «ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար» ձևակերպման մեջ նշված «գործը» եզրույթը, եզրահանգել են, որ այն վերաբերում է բացառապես մեկ այլ քրեական գործի: Նշվածով պայմանավորված՝ ամբաստանյալի մահացած լինելու փաստի հիմքով քրեական*

---

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 11, թերթեր 86-92:
[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 12, թերթեր 80-91:

գործը, որով Դիմողն ունեցել է փուժողի կարգավիճակ, կարճվել է առանց գործով դատավճռի հանգելու հեռանկարի (...): Սահմանադրական դատարանը փաստում է, որ նշված արդյունքում Դիմողը զրկվել է ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն հանգեցրած ենթադրյալ հանցավոր արարքի առկայության վերաբերյալ վերջնական դատական հաստատման (որպես նոր երևան եկած հանգամանք) դատավարական հեռանկարից միայն այն փաստի բերումով, որ իր իրավունքի ենթադրյալ խախտումը նոր երևան եկած հանգամանքի հիման վրա վիճարկելու հնարավորությունը (քրեական դատավարությունը համապատասխան մեղադրական դատավճռով ավարտվելու դեպքում) նախատեսված է եղել քաղաքացիական դատավարության, այլ ոչ՝ քրեական դատավարության շրջանակում՝ արդյունքում Դիմողի համար ստեղծելով իր իրավունքի ենթադրյալ խախտման դեմ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի իրացման «դատավարական փակուղի»:

(...) Վերը նշվածի հիման վրա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական դատավարական մեջբերված իրավակարգավորումների և վիճարկվող դրույթի համակարգային կապի հիման վրա կատարված վերլուծությունը վկայում է, որ վիճարկվող դրույթը չի սահմանափակվում միայն քրեական դատավարության շրջանակում նոր երևան եկած հանգամանքի հիմքով գործի վերսկսման իրավական հնարավորությամբ, այլ անհրաժեշտ կառուցակարգ է այլ ճյուղային, սույն գործին վերաբերելի մասով՝ քաղաքացիական դատավարության շրջանակում անձի՝ ենթադրյալ խախտված իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման համար: Այս մոտեցումը համահունչ է նաև քրեական դատավարության օրենսդրությամբ ամրագրված՝ անձին հանցագործությունից պաշտպանելու նպատակին (Օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ), երբ դատարանի կողմից դատավճռով հաստատված լինելու դեպքում հանցագործությամբ պատճառված վնասի վերականգնման հնարավորությունը չի ենթադրում բացառապես քրեական դատավարական ընթացակարգերի գործարկում, այլ կարող է իրացվել նաև այլ ճյուղային դատավարական ընթացակարգերի շրջանակում»[3]*:*

---

[3] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2024 թվականի հունվարի 23-ի թիվ ՍԴՈ-1712 որոշման 5.6-րդ և 5.7- րդ կետերը:

<u>Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2024 թվականի հունվարի 23-ի թիվ ՍԴՈ-1712 որոշումը հիմք է Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի մարտի 7-ի որոշումը վերանայելու համար:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 352-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *«Բացառիկ վերանայումը կիրառվում է այն դեպքում, երբ (…) նոր հանգամանքի (…) հիմքով բողոքարկվում է սույն օրենսգրքի 401-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Բացառիկ վերանայման վարույթներն են՝*

1) նոր հանգամանքներով վարույթը.

(…)

2. Բացառիկ վերանայման ենթակա են՝

1) օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին դատարանի որոշումը.

2) մինչդատական ակտերի վիճարկման վարույթի շրջանակներում կայացված և օրինական ուժի մեջ մտած այն դատական ակտը, որով հաստատվում է քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու իրավաչափությունը, քրեական հետապնդումը նորոգելու անիրավաչափությունը կամ վարույթը կարճելու իրավաչափությունը.

3) սույն մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դատական ակտերի վերանայման արդյունքով վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանի կայացրած և օրինական ուժի մեջ մտած որոշումը»:

Նույն օրենսգրքի 403-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նոր հանգամանքներով բողոք կարող է բերվել հետևյալ հիմքերով.*

(…)

4) Սահմանադրական դատարանը տվյալ վարույթով դատարանի կիրառած նորմատիվ իրավական ակտի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն իր մեկնաբանությամբ ճանաչել է Սահմանադրությանը

համապատասխանող, սակայն գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ. (...)»:

16. Մեջբերված նորմերի բովանդակությունից բխում է, որ նոր հանգամանքով դատական ակտի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի՝ ուժի մեջ մտած որոշումը, որով Սահմանադրական դատարանը տվյալ վարույթով դատարանի կիրառած նորմատիվ իրավական ակտի դրույթն իր մեկնաբանությամբ ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

17. Սույն գործի նյութերից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հունիսի 16-ի որոշմամբ Անդրանիկ Սերյոժայի Այվազյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով քրեական հետապնդումը դադարեցվել է և քրեական գործի վարույթը կարճվել՝ ամբաստանյալի մահվան հիմքով[4],

- Վերաքննիչ դատարանը նշված որոշման դեմ դատախազի և տուժողի ներկայացուցչի վերաքննիչ բողոքները 2022 թվականի սեպտեմբերի 26-ի որոշմամբ մերժել է՝ դատական ակտը թողնելով անփոփոխ[5],

- Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի մարտի 7-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ տուժողի ներկայացուցչի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է[6],

- տուժող Դավիթ Փոլադյանը 2023 թվականի օգոստոսի 2-ին դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ վիճարկելով 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը[7],

- ՀՀ Սահմանադրական դատարանը 2024 թվականի հունվարի 23-ի թիվ ՍԴՈ-1712 որոշմամբ նշել է, որ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով ամրագրված

---

[4] Տե՛ս սույն որոշման 2-րդ և 11-րդ կետերը:
[5] Տե՛ս սույն որոշման 3-րդ և 12-րդ կետերը:
[6] Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

իրավակարգավորումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ «նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար» ձևակերպումը վերաբերում է նաև քաղաքացիական դատավարության կարգով նոր երևան եկած հանգամանքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայմանը: Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանը փաստել է, որ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը դիմողի նկատմամբ կիրառվել է Սահմանադրական դատարանի որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ[8]:

18. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2024 թվականի հունվարի 23-ի թիվ ՍԴՈ-1712 որոշումը ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի մարտի 7-ի որոշումը վերանայելու հիմք է:

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2024 թվականի հունվարի 23-ի թիվ ՍԴՈ-1712 որոշումը հիմք է Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հունիսի 16-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 26-ի որոշումները բեկանելու համար:

20. *«Մարդու իրավունքների եվրոպական դատարանում կայացված [վճիռների] հիման վրա ներպետական մակարդակով որոշակի գործեր վերաքննելու կամ վերաբացելու մասին»* Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2000 թվականի հունվարի 19-ի թիվ R(2000)2՝ անդամ պետություններին ուղղված հանձնարարականի 1-ին կետի համաձայն՝ Պայմանավորվող կողմերին կոչ է արվել երաշխավորել ազգային մակարդակով «*restitutio in integrum*»՝ հնարավորինս ապահովելու համար անհրաժեշտ համարժեք հնարավորությունների առկայությունը:

Նույն հանձնարարականի 2-րդ կետի համաձայն՝ Նախարարների կոմիտեն խրախուսում է Պայմանավորվող կողմերին, մասնավորապես՝ վերլուծել իրենց

[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

ազգային իրավական համակարգերը՝ նպատակ հետապնդելով երաշխավորել գործի վերաքննության համար անհրաժեշտ համարժեք հնարավորությունների գոյությունն այն դեպքերի համար, երբ Եվրոպական դատարանը հայտնաբերել է Կոնվենցիայի խախտում, հատկապես երբ.

(i) տուժող կողմը շարունակում է համապատասխան ներպետական որոշման ելքի պատճառով կրել շատ ծանր բացասական հետևանքներ, որոնք համարժեքորեն չեն շտկվում արդարացի հատուցման տրամադրմամբ և չեն կարող շտկվել, բացառությամբ գործի վերաքննության կամ վերաբացման միջոցով, և

(ii) Դատարանի վճիռը հանգեցնում է այն եզրակացության, որ

ա) վիճարկվող ներպետական որոշումն ըստ էության հակասում է Կոնվենցիային,

բ) հայտնաբերված խախտումը հիմնված է այնպիսի ծանրության դատավարական սխալների կամ թերությունների վրա, որ լուրջ կասկածի տակ է հայտնվում բողոքի առարկա ներպետական վարույթի ելքը:

20.1. Վերոնշյալ հանձնարարականի կապակցությամբ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի մեկնաբանությունների համաձայն՝ կոնվենցիոն մարմինների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հատկապես քրեական իրավունքի ոլորտում գործերի վերանայումը, ներառյալ վերաբացումը, ունի հիմնարար նշանակություն:

Նշված չափանիշներից **(i)**-ը, ըստ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի, վերաբերում է օրինակ այն անձանց, ովքեր դատապարտվել են ազատությունից զրկելու հետ կապված երկարատև պատիժների և դեռևս գտնվում են քրեակատարողական հիմնարկում, երբ կոնվենցիոն մարմինների կողմից քննվում է գործը: ***Այդ չափանիշի բավարարման համար պետք է լինի ուղիղ պատճառահետևանքային կապ՝ հայտնաբերված խախտման և տուժող կողմի համար առաջացած շարունակական բացասական հետևանքների միջև:***

Վերոնշյալ պայմանի առկայության պարագայում, ըստ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի, **(ii)** խմբում ներառված չափանիշները նպատակաուղղված են ընդգծելու խախտումների բնույթը, որոնց պայմաններում գործերի վերանայումը կամ վերաբացումը հատկապես կարևոր է: Այսպես, «ա» չափանիշին կարող են համապատասխանել այն դեպքերը, երբ օրինակ՝ անձի

դատապարտումը ներպետական ատյանների կողմից խախտել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածն այն պատճառով, որ ներպետական մարմինների կողմից քրեորեն պատժելի դիտարկված հայտարարություններն իրավաչափորեն արվել են արտահայտվելու ազատության շրջանակներում, կամ Կոնվենցիայի 9-րդ հոդվածը, քանի որ քրեորեն պատժելի դիտարկված անձի վարքագիծը եղել է կրոնի ազատության իրավաչափ դրսևորում: Ինչ վերաբերում է «բ» չափանիշին, ապա դրան կարող են համապատասխանել այն դեպքերը, երբ օրինակ՝ տուժող կողմը չի ունեցել ժամանակ և հնարավորություն կազմակերպելու իր պաշտպանությունը քրեական դատավարությունում, երբ դատապարտումը հիմնվել է խոշտանգման արդյունքում ստացված հայտարարությունների կամ այն նյութերի վրա, որոնք տուժող կողմը հնարավորություն չի ունեցել ստուգել: ***Նման թերությունները պետք է լինեն այնպիսի ծանրության, որ լուրջ կասկած առաջացնեն ներպետական վարույթի արդյունքների վերաբերյալ***[9]:

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 408-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«[Բացառիկ վերանայում իրականացնող դատարանն իրավասու է չբեկանելու բողոքարկվող դատական ակտը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 403-րդ հոդվածով նախատեսված հանգամանքներն ըստ էության չէին կարող ազդել վարույթի արդյունքի վրա (...)»:*

21.1. Վերոնշյալ իրավադրույթի կապակցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել առ այն, որ. *«(...) [Ի]րավաչափ նպատակ է հետապնդում վեճի առարկա դրույթով նախատեսվող լրացուցիչ պահանջը: Այն պետք է դիտարկել ոչ թե իրավունք կամ սուբյեկտիվ հայեցողություն դատական ակտն անփոփոխ թողնելու համար, այլ նորմատիվ պարտադրանք՝ նման հնարավոր դեպքերում ծանրակշիռ փաստարկներով հիմնավորում ներկայացնելու վերաբերյալ: Պարզապես այսպիսի իրավակարգավորումը նույնպես ենթադրում է իրավական մշակույթի պատշաճ մակարդակ և «ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում» եզրույթի հայեցողական սահմանների իրավական հստակեցում, ինչն օրենսդրի և դատական համարժեք*

[9] Տե՛ս Explanatory memorandum, Council of Europe, Committee of Ministers, Recommendation R (2000)2 on the re-examination or reopening of certain cases at domestic level following judgements of the European Court of Human Rights.

նախադեպ ստեղծելու խնդիրն է: (...) Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ նման փաստարկների բացակայության պայմաններում վերանայված դատական ակտի եզրափակիչ մասի անփոփոխ թողնելը կհակասի իրավունքի գերակայության սկզբունքին և իրավական պետության հիմնարար արժեքներին»[10]*:*

22. Վերոնշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված մոտեցումը կիրառելի է նաև այն դեպքում, երբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման հիմքը՝ որպես նոր հանգամանք, ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումն է:

23. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը կիրառել են ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1712 որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ: Այդ առնչությամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն բողոքի քննության պահի դրությամբ տուժող Դավիթ Փոլադյանը շարունակում է կրել ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1712 որոշմամբ արձանագրված՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրական դատարանի նույն որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ կիրառելու հետևանքները:

24. Ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2024 թվականի հունվարի 23-ի թիվ ՍԴՈ-1712 որոշումը հիմք է Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հունիսի 16-ի և Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 26-ի որոշումները բեկանելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու համար: Առաջին ատյանի դատարանը, նոր քննության արդյունքում, հաշվի առնելով ՀՀ Սահմանադրական դատարանի վերը հիշատակված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, պետք է հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, «Հայաստանի

---

[10] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2013 թվականի մայիսի 31-ի թիվ ՍԴՈ-1099 որոշման 6-րդ կետը:

Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ, 31-րդ, 33-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 352-րդ, 361-րդ, 362-րդ, 363-րդ, 401-403-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Տուժող Դավիթ Փոլադյանի ներկայացուցիչ Կ.Մեժլումյանի բացառիկ վերանայման բողոքի հիման վրա ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի մարտի 7-ի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայել:

2. Բացառիկ վերանայման արդյունքում Անդրանիկ Սերյոժայի Այվազյանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի հունիսի 16-ի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 26-ի որոշումը բեկանել և վարույթը փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ